

ԱՆՈՒՇ ՄԵՍՐՈՊԻ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

Քանոնահարուստի, ժուռնալիստ, մանկավարժ

Լուս-Անժելես, ԱՄՆ,

E-mail: anush.00000@gmail.com

Doi:

Խմբագրական խորհրդի երաշխավորությամբ՝ Գ. Կ. Շագոյանի (20.4.2023 թ.)

Գրայնս՝ (16.3.2019 թ.),

հեղինակը ներկայացրել է հրատարակության՝ (11.3.2023 թ.):

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐԻ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ամփոփում

Երաժշտական դաստիարակության մանկավարժության և մեթոդաբանության հարցերի շուրջ է հոդվածը: Հեղինակը գրում է մանկավարժության դաստիարակության, հանրակրթական և երաժշտական դպրոցների տարբերությունների մասին: Նպատակը՝ հասարակությանը պիտանի և լիարժեք ինքնավստահ մարդ դաստիարակելը, հեղինակը դրան հասնելու մեթոդներն ու մասնագետներն է նշում: Երաժշտական դպրոցական կրթությունը որոշ առարկաների շնորհիվ երաժշտապես կրթելուց բացի, զբաղվում է մասնաշաղկապի հոգեկերտվածքի ձևավորմամբ-դաստիարակությամբ՝ անհատապես, ինչը կարևոր հենասյուներից մեկն է: Հայ կոմպոզիտորական դպրոցը մեծ ներդրումներ ունի այս հարցերում, ակնառու ապացույցը կոմպոզիտորների միության հետևողական աշխատանքն է ու համագործակցությունը երաժշտական դպրոցների անցիվներին: Չուզահեռներ անցկացնելով երաժշտական ու հանրակրթական դպրոցներում տարվող կրթադաստիարակչական աշխատանքների, առավելությունների ու թերությունների մասին, հեղինակը հստակ նշում է վերջինիս բացթողումները, մասնաշաղկապի պետության ձեռամբ արվելիք կարևոր բարեփոխումների մասին:

Բանալի-բառեր. մանկավարժություն, հայ կոմպոզիտորներ, աշակերտ-ուսուցիչ-պետություն, մանկավարժի դերը, Կոմիտաս, դաստիարակության պատգամներ:

Abstrakt

Qanun player, journalist, pedagogue Anush Mesrop Kirakosyan. - "Methodological problems of some issues of pedagogy".

The article focuses on the issues of pedagogy and methodology of music education. The author delves into pedagogical education, highlighting the differences between comprehensive and music schools. Education should nurture individuals capable of integrating into society while fostering a sense of self-confidence. Specifically, the text discusses various methodologies and approaches employed to realize this aim. Music school education extends beyond musical instruction, incorporating a multifaceted approach. It not only imparts musical knowledge but also actively shapes a student's psychological development, while employing a personalized approach, which stands as one of the fundamental pillars

of music school education. The Armenian composer school demonstrates a significant commitment to these principles, notably evidenced by the sustained engagement and collaboration of the Composers' Union within music school activities. The author draws parallels between educational initiatives, highlighting the strengths and weaknesses of both music schools and comprehensive schools, clearly stating their shortcomings. Also, the text emphasizes a strong need for governmental reforms.

Key Words: pedagogy, Armenian composers, student-teacher-state, the role of the pedagogue, Komitas, messages of education.

Աբստրակտ

Канонистка-солистка, преподаватель, журналист, педагог Ануш Месроповна Киракосян. - “Методологические проблемы некоторых вопросов педагогики”.

В статье рассматриваются вопросы педагогики и методики музыкального образования. Автор пишет о педагогическом образовании, отличиях государственных и музыкальных школ. Цель – воспитать человека, пригодного для общества и полностью уверенного в себе, автор также упоминает методы и подходы ее достижения. Обучение в музыкальной школе, помимо музыкального воспитания через некоторые предметы, формирует и психику ученика - обучение индивидуально, что является одним из важных факторов. Армянская композиторская школа много вкладывает в эту работу, ярким подтверждением чего является сотрудничество Союза композиторов с деятельностью музыкальных школ. Проводя параллели с воспитательной работой, преимуществами и недостатками музыкальных и общеобразовательных школ, автор ясно отмечает упущения последних, а также важные реформы, которые предстоит провести государству.

Ключевые слова: педагогика, армянские композиторы, ученик-педагог-государство, роль педагога, Комитас, заповедь воспитания.

ՄԱՍ 1

Ներածություն

Երկար տարիների մանկավարժական գործունեության ընթացքում, կուտակվում են բազմաթիվ հարցեր ու խնդիրներ, որոնք ժամանակի հրամայականով չեն լուծվում, կամ գոնե մասնակիորեն չեն լուծվում, անգամ կարող են կործանարար լինել: Սրանք ուռճացված բառեր չեն, այլ այսօրյա մեր ունեցած բոլոր տեսակի պետական ու հասարակական ոլորտներում տեղ գտած բացթողումների, անկատարության, անվստահության, գիտելիքի պակասի, բարոյագիտության և գեղագիտության, նաև ճիշտ հոգեկերտվածքի համատարած սովի պայմաններն են: Շարունակել աչք փակե՞լը: Մեղմ ասած, դա ամենամեծ սխալը կլինի մեր սերունդների հանդեպ:

Մեր հետազոտության թեման է՝ մանկավարժության որոշ հարցերն ու դրանց մեթոդաբանական խնդիրները: Սկսենք սկզբից: Եվ որքան հնարավոր է մանրա-

մասն քննարկենք մանկավարժության կարևոր անելիքները, ներկայացնենք առաջարկություններ և տանք լուծումներ հնարավոր ու ահնարին թվացող խնդիրներին:

Մանկավարժության առանձնահատկությունները

Յուրաքանչյուր գիտություն ունի իր առանձնահատկությունները, իր մեթոդներն ու մոտեցման յուրահատկությունները, այս կամ այն արդյունքին հասնելու ձևերն ու նպատակները, մանկավարժությունն էլ նույնպես: Այն իր մեջ կրում է գիտական մոտեցումների բազմաթիվ ապացույցներ, որոնց շնորհիվ պարզվում է դրա ճշմարտացիությունը և օգտակարությունը: Սակայն փաստ է, որ գործող օրինակները, ձևերն ու մեթոդները չեն կարող մշտապես տեղավորվել արագ փոփոխվող ժամանակի պահանջների ու հրամայականների ձևաչափերի մեջ, ինչի պատճառով էլ առավել կարևորվում է ուսուցչի կամ մանկավարժի կրթվածության և զարգացածության աստիճանը, ժամանակի հետ համընթաց քայլել կարողանալու ունակությունը: Վառ օրինակներից է, սովետական շրջանի ամենահայտնի ռուս մեծ մանկավարժ, արձակագիր, դրամատուրգ՝ Անտոն Մեմյոնովիչ Մակարենկոյի դաստիարակության մեթոդը, որը նա կիրառում էր անօթևան երեխաների դաստիարակման ընթացքում (1.):

Այս մեթոդն արդիական էր սովետական սկզբնական շրջանում, երբ անօթևան երեխաների քանակը Ռուսաստանի տարբեր շրջաններում հազարների էր հասնում: Այսինքն, ժամանակը ծնում և, ինչու չէ, պարտադրում է դաստիարակության այս կամ այն մոտեցումն ու մեթոդը կիրառելու անհրաժեշտությունը, սակայն բնականաբար ինչն արդիական չէ արդեն հետագա ժամանակների համար: Այս օրինակը հստակ ցույց է տալիս, որ սա ոչ միայն դժվար երեխաների ուղղակի դաստիարակության ձև է, այլ նաև հմուտ մանկավարժի գործունեության այն ոլորտն է, որտեղ կատարած հստակ քայլերի շնորհիվ լուծվում է նաև պետության առջև ծառայած արդի լրջագույն խնդիրներից մեկը: Ի դեպ, Մակարենկոյի հաստատմամբ, սաներից շատերը հետագայում դարձել են օրինակելի քաղաքացիներ ու պետության համար պիտանի մարդիկ, մասնագիտություն են ձեռք բերել և, որ ամենակարևորն է, երկար ժամանակահատվածում, բայց լուծվել է պետության առջև ծառայած անլուծելի թվացող խնդիրը:

Այսօրվա երեխայից վաղվա լիիրավ քաղաքացի պատրաստելն աներկբա մանկավարժության թիվ մեկ խնդիրն է: Այստեղ երկու կարծիք չկա: Եթե այո, ուրեմն ապագա քաղաքացու ստացած դաստիարակությունն ու կրթությունն ինչ ուղղվածություն էլ ունենա է, պետք է ծառայի զարգացած հասարակության ստեղծման և պետականաշինության գործին:

Մտածված քայլերը՝ համապատասխան արդյունք են տալիս, համարձակ որոշումների ու արագ կյանքի կոչելու քայլերը՝ չեն ուշացնում արդյունքը: Այստեղ որևէ նորը հորինելու խնդիր չկա, սակայն կա ժամանակի ու անելիքների ներառաշնա-

կության խնդիր, ժամանակն էլ իր պահանջները և հրամայականներն ունի, իսկ մենք դեռ խարխափում ենք մեզ համար արդեն հնացած սովետական մտածողության ու որոշ կարծրատիպերի ազդեցության և ոչ պիտանի չափանիշների ազդեցության տակ: Այդպես էլ կրթելով մեր մանուկին, հաշվի չառնելով, որ նա այլ հասարակարգի ու նաև այլ աշխարհի մարդ է իր ծննդյան հենց առաջին օրից: Երկար տարիների մանկավարժական փորձը մեզ ապացուցում է, որ երեխայի հոգու բանալին կարելի է գտնել միայն իմանալով նրա պահանջները, դրանով նա մեզ ցույց է տալիս, որ ինքը «նոր մարդ» է և այլ մոտեցում է պահանջում:

Մանկավարժությունը երազած պետության այցեքարտն է, եթե այն պատշաճ բարձրության վրա է: Ինչպիսի պետություն երազում ենք ունենալ, դրան համապատասխան դաստիարակություն և կրթություն տալու պատրաստ պետք է լինենք բնականաբար: Սակայն, այսօր անելիքներն ու երազանքները համահունչ չեն, ինչն էլ ցույց է տալիս, որ դպրոցն ու կրթությունն անհապաղ հատակ վերափոխման և վերազինման կարիք ունեն, իսկ աշակերտ-ուսուցիչ-պետություն հարաբերության մեջ անհրաժեշտ են նոր մոտեցումներ: Սակայն վերափոխում ասելով բոլորովին ի նկատի չունենք ամեն ինչ գլխիվայր շուռ տալը: Բոլորովին, որովհետև ցանկացած ոլորտում ծայրահեղությունը կործանիչ է, իսկ ճշգրիտ և կանոնակարգված աշխատանքն՝ արդյունավետ: Մա այն դեպքն է, երբ առաջնահերթ է դառնում երեխայի ներսում թաքնված ընդունակությունների բացահայտումը, ինչի շնորհիվ կարող է նրա հոգում սկիզբ դրվել մի բանի, ինչին նա ընդունակ է: Դպրոցի այսպիսի մոտեցումը երեխայի հանդեպ, հնարավորություն է տալիս սանին կապվել, սիրել և հաճույքով մասնակցել դասապրոցեսին, նաև նրա ընկալման ոլորտից դուրս այլևայլ միջոցառումների, ինչը զարգացման այլ փուլ կտանի նրան: Հոգեբանական այս պահը կարևորելով և կյանքի կոչելով, մենք արժևորում ենք երեխայի անհատականությունը՝ չկրկնելով սովետական դպրոցի սխալը, այն է՝ հավասարության նշան դնելով տարբեր ընդունակություն և ընկալունակություն ունեցողների միջև, ինչն արդարացի չէ: Համաձայնելով «Յուրաքանչյուրին ըստ իր ընդունակության, յուրաքանչյուրին ըստ իր կարողության» կարգախոսի հետ, բոլորովին չենք նսեմացնում առավել պակաս հնարավորությամբ փոքրիկին: Ընդհակառակը, նրանք կարող են և պետք է նստեն նույն նստարանին (ի նկատի ունենալով տարիքը), սակայն մոտեցումը կլինի տարբեր: Այստեղ է, որ շատ կարևորվում է մանկավարժի պատրաստվածությունը: Պետք չէ, դժվարությունից խուսափելու պատճառով կանգ առնել կես ճամփին, հարկավոր է ուժ գտնել վերափոխվելու, որովհետև ի՞նչ կարող է տալ սանին ժամանակից դուրս մնացած մանկավարժը, եթե չաշխատի իր ինքագարգացմամբ: Պարզապես կոժվարացնի երեխայի կայացման պրոցեսը, սա լավ գիտեին Մեծ մանկավարժները (2. էջ 79):

Հաստատուն և բազմակողմանի զարգացած դասվարը միայն կարող է երեխա-

ներին տանել ոչ միայն գիտության ու կրթության ճանապարհով, այլև սերմանել ազգային նպատակի ու պետական մտածողության ծիլերն իր բոլոր չափանիշներով ու արդյունավետ ճանապարհներով: Այս ամենը սակայն ոչ բռունցքը վեր պարզած ազգային երգ երգելու օրինակով, այլ պետական հովանավորչությամբ ու ծրագրված: Դրանով ապագա ՀՀ քաղքացու առջև կորվի այն ուղեցույցը, որը նրան ցույց կտա հետագա անելիքի բանալին:

Առաջին հայացքից թվում է, թե կարիք չկա այսքան խոր իմաստավորել այս թեման, որովհետև վերջին հաշվով այն ընթացակարգ է և կյանքին համընթաց գործընթաց, որն արդեն տեղի է ունենում և այստեղ հեծանիվ հորինելու կարիքը ևս չկա, մանավանդ, որ մանկավարժություն բառն ինքնին հուշում է իմաստը՝ մանուկ «վարժեցնել», այսինքն՝ դաստիարակել, սովորեցնել, կրթել: Մեր ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ դպրոցի վերափոխման մեծագույն անելիքը դասագրքերը չէին, որոնք դժբախտաբար հիմնովին փոխվեցին՝ ուղղակի հիմնովին ջախջախելով մեր կրթության շատ լուսավոր կետեր գրականության ասպարեզում, բաց մնացին պատմության հետ կապված լուրջ անելիքներ, էթիկայի և էսթետիկայի հետ կապված դասաժամերի բացակայության, նախադպրոցական գրքերի հետ կապված խնդիրներ և այլն:

Վերը նշված այս երեք կարևոր գործոնները՝ դաստիարակելը, սովորեցնելն ու կրթելն առանձին-առանձին անհրաժեշտ են տարիքային բոլոր շերտերին՝ նախադպրոցական, դպրոցական, բուհական: Համաձայնել այն արտահայտության հետ, թե՛ «բուհական տարիքի պատանուն ի՞նչ դաստիարակես», անհեռանկարային է: Եվ, ընդհանրապես սիրողական մակարդակի մտածողությունը չի կարող տեղ ունենալ պրոֆեսիոնալ գործունեության մեջ: Չնայած գիտակից մարդն իր ամբողջ կյանքում աշխատում է իր վրա, ոչ միայն գիտելիքի ասպարեզում առաջխաղացում ունենալու, այլև հասարակության կամ հասարակության բարեկիրթ շերտի լիիրավ անդամ լինելու համար, այնուամենայնիվ, ամենակարևոր անելիքը պետական կրթական օջախների կատարած աշխատանքն է, ինչը հիմնաքար է հանդիսանում: Այստեղից է, որ կարևորվում է պետության համապատասխան հոգածությունը և՛ կրթական օջախների, և՛ ուսուցչի ու մանկավարժի նկատմամբ: Եզրակացություն՝ հենց այս մոտեցմամբ է պետությունն իրավիճակի տերը դառնում, նա է և՛ գիտելիք մատուցողը, և՛ պահանջատերը, քանզի առանց նրա լրջագույն հսկողության երբեմն դժվարանում, իսկ երբեմն էլ հնարավոր չի լինում վերահսկել դրությունը:

Մակավարժի դերը

Սրանից պարզ հետևություն. մանկավարժի անելիքը չի սկսվում և ավարտվում միմյայն կրթելով, իհարկե գիտելիք հաղորդելով: Սա շատ լավ գիտակցել են մեր Մեծերը՝ Կոմիտաս, Թումանյան և այլոք, ովքեր նաև մեծ մանկավարժներ լինելով,

ուսանելի խրատներ են պատգամել մեզ: Նրանց խոսքերի իմաստի գիտակցաբար և խելամիտ ընկալումը կարող են տալ մանկավարժության կարևոր չպարզաբանված հարցերի պատասխանները: Սա շատ լավ գիտակցում է յուրաքանչյուր մանկավարժ, ավելին՝ փորձառու մանկավարժներից յուրաքանչյուրն ունի իր մեթոդը: Այդ մեթոդները լուսաբանվում են ու հրապարակայնացվում մանկավարժական սիմպոզիումների, ժողովների, հանդիպում-ժանոթությունների ժամանակ: Սակայն այս ամենին պետք է մասնակցի պետությունը, ոչ միայն իր բանավոր կողմնորոշումներով կամ ձևական վարքագծով (ինչը պետք չէ ժխտել), այլ հստակ պլանային ուղղվածություն ունեցող ծրագրով: Որքան էլ վերն ասվածը պարզ է, այնուամենայնիվ հստակեցնելն ավելորդ չէ. *«Կրթությունը համապարփակ մոտեցման ձև լինելուց բացի, անպայման պետք է ունենա ազգային ուղղվածություն, որովհետև այն առաջին հերթին նեղ միջպետական կարևոր գործընթաց է, մինչև միջազգային կրթական ցենզին ինտեգրվելը»:*

Այսօրյա արագընթաց իրադարձությունները հստակ ցույց են տալիս վերն արտահայտած մտքի արդիականությունը և անհապաղ իրագործումը: Որևէ նորարարության կամ նորի սկիզբ հիմնադրելը երբեք ուշ չէ, ոչինչ երբեք ուշ չէ, դաստիարակության և կրթության ասպարեզում առավել ևս, որովհետև նրա դրական շարժը պետության զարգացման ու բարգավաճման խթան է անպայման:

Կրթության բնագավառի բացթողումներից են բխում մեր պետության մեջ այսչափ տարակարծիություններն ու տարաձայնությունները, բազմաթիվ կուսակցությունները, տարատեսակ ու տարաբնույթ, հաճախ էլ անհասկանալի միություններն ու ընկերությունները, որոնց գործունեությունը, որքան էլ անմեղ թվա, դրանց քանակն ու տարատեսակությունն արդեն խոսում են: Մենք այսպիսի «շռայլություն» չենք կարող թույլ տալ, որովհետև մեր պատմության պարուրածն կրկնությունն առնվազը մեզ լավագույն դաս պետք է լինի, քանզի այս պահին աշխարհաքաղաքական լուրջ խնդիրներ կան մեր առջև ծառայած, որի համար գիտակից հասարակություն է պետք և ճշգրիտ կառավարում, այլապես ժամանակը չի ների մեզ, եթե մենք չափսոսանք նրան:

Մանկավարժության դերն ամենակարևոր գործոններից է մարդու՝ այսինքն հասարակության ապագա անդամի կյանքում, սակայն նրա հետագա զարգացման համար ճիշտ ուղղվածությունը տալիս է մանկավարժի և ընտանիքի համագործակցությունն անպայման: Մեզ համար դա ռազմավարական նշանակություն ունի նաև, որովհետև հակառակ դեպքում ինչպես նկատել է հանճարեղ Կոմիտասը. *«...Եթե մանուկը չի հասկնար ձեր դասաւանդութիւնը, յանցանքը ձերն է, որովհետև չեք կրցած հասկանալ անոր հոգին, պետք է վար իջնել մինչեւ անոր հոգեկան աստիճանը, եւ զայն առնելով ձեզի հետ բարձրացնել: ՄԻԱԼ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԱՐԴԻՒՈՒՆՔ Է, ՈՐ ՇԱՏԵՐԸ ՈՐՈՆՔ ՀԱՆՃԱՐՆԵՐ ՊԻՏԻ ԸԼ-*

ԼԱՅԻՆ, ԵՂԱԾ ԵՆ ԳՈՂԵՐ...»: (2. էջ 78):

Այս գերհզոր հայը, ով կոմպոզիտոր էր, երաժշտական ազգագրագետ, երաժիշտ, երգիչ, խմբավար և նաև մեծ ուսուցիչ, անչափ կարևորում էր դաստիարակության դերն ու հաստատում, որ եթե կոչված ես մանկավարժ լինելու, ուրեմն պիտի հավատարիմ լինես դրան: Այլ կերպ, նրա խորհուրդն ամենօրյա աղոթքի նման պետք է հաստատվի հայ մանկավարժի գիտակցության մեջ և լուսատու ջահի նման ճանապարհ հարթի:

Երբեմն օրինակներ են բերվում, թե ժամանակներն այլ են, և դաստիարակությունն այն ազդեցությունը չունի, ինչ ոչ վաղ անցյալում: Քաղաքակրթությունը չի կարող վնասել դաստիարակությանը, սա իր կացութաձևով ապացուցել է զարգացած հասարակարգում ապրող ճապոնացի ժողովուրդը, որն օրացույցի վրա որպես տոն չունի ուսուցչի օր: Առաջին հայացքից զարմանալի, սակայն ինչին է պետք մեկօրյա տոնը մի ազգի, ում համար տարվա ամեն օրն ուսուցչի օր է, ինչը դրսևորվում է պետության ու հասարակության ուշադրությամբ ու դրական վերաբերմունքով:

Վերադառնալով մեր իրականություն, եթե մի անգամ էլ ընթերցենք Կոմիտասի վերը հիշատակված խոսքերը, ապա կնկատենք, որ նա հիշեցնում է, թե մանկավարժը նախ՝ գործ ունի երեխայի հոգեկերտվածքի հետ, ապա հաջորդ կարևոր գործոնը՝ ազգային դաստիարակությունն է. *«Ուսուցիչ պարոններ ու քույրեր, զգուշութեամբ ու երկիրդածութեամբ մօտեցէ՛ք դաստիարակութեան գործին. խիստ փափուկ պաշտօն մըն է ձերը. դաստիարակելու կոչված էք սերունդ մը, որ ապագայ ազգն է. սխալ ուղղութեամբ ազգ մը կը խորտակէք վերջը»* (2. էջ 79):

Ստացվում է, եթե այս երկու կարևոր հանգամանքներն իր աշխատանքի ընթացքում ուսուցիչը հաշվի չի առել, ուրեմն պետք է սկսի վերափոխել իրեն, ինչն ակնկալում է նվիրվածություն ու համբերություն, առանց որոնց մանկավարժը դժվար թե հաջողի:

Վերջաբան

Անհրաժեշտ է նշել, որ մանկավարժական դաստիարակության գործն ունի ճանփարածան, դա հանրակրթական և երաժշտական դպրոցների դաստիարակության տարբերությունն է: Կարող եք մտածել, թե մանկավարժությունը մի նպատակ ունի, ինչ բաժանարարի մասին է խոսքը: Այո՛, նպատակը մեկն է՝ հասարակությանը պիտանի մարդ դաստիարակելը, սակայն մեթոդներն ու մոտեցումներն այլ են, քանզի հանրակրթական դպրոցը տալիս է համապարփակ գիտելիքներ մի շարք առարկաների շնորհիվ, իսկ երաժշտական դպրոցը որոշ առարկաների շնորհիվ երաժշտապես կրթելուց բացի, զբաղվում է նաև աշակերտի հոգեկերտվածքի ձևավորմամբ - դաստիարակությամբ՝ անհատապես: Այ հենց էստեղ պետք

է փնտրել դաստիարակության կարևոր հենասյուներից մեկը: Նախ, պետք է նշել, որ տարբերություններն ակնառու են և ունեն կարևոր բաղադրիչներ: Իսկ թե ինչպիսի մեթոդաբանությամբ և ինչ հոգեբանությամբ պետք է զինված լինի ուսուցիչը, ինչ առավելություններ ունի երաժշտական կրթությունն ու դրա զուգահեռները հանրակրթության հետ, ծանոթանանք հետևյալ արդեն տպագրված հոդվածում (տե՛ս՝ 3.):

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Макаренко А. С.*, *Беспризорность и борьба с ней.*, педагогические сочинения в 8 томах, том 5, Москва, 1984.
2. *Կոմիտաս վարդապետ*, Ուսումնասիրություններ եւ յօդածներ, Գիրք Բ, Եր., 1941թ.:
3. *Կիրակոսյան Ա.Մ.*, Մանկավարժության որոշ հարցեր ու մեթոդաբանական խնդիրներ, 2-րդ մաս, //Երաժշտական Հայաստան, 1(54)2018, համարը նվիրված է Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի 95 ամյակին:
Makarenko A. S., *Homelessness and the Fight against It, pedagogical works in 8 volumes, vol. 5, Moscow, 1984.*
Reverend Komitas, Studies and Articles, Book B, Yerevan, 1941.
Kirakosyan A.M., *Some Problems of Pedagogy and Methodological Issues, part 2, //Musical Armenia, 1(54) 2018, the issue is dedicated to the 95th anniversary of Komitas State Conservatory.*

REFERENCES

1. *Makarenko A. S.*, *Besprizornost' i bor'ba s nej.*, pedagogicheskie sochineniya v 8 tomakh, tom 5, Moskva, 1984.
2. *Komitas vardapet*, *Usumnasiruthyunner ev yodvatsner*, *Girq B, Yer.*, 1941th.
3. *Kirakosyan A. M.*, *Mankavarzhuthyan vorosh hartzer u methodabanakan khndirner*, 2-rd mas, /*Yerazhshtakan Hayastan*, 1 (54) 2018, *hamar' nvirvats ej Komitasi anvan petakan konservatoriayi 95-amyakin.*

Հեղինակի մասին. ԱՆՈՒՇ ՄԵՍՐՈՊԻ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ [ծ. 14.12.1957 թ., ք. Ալավերդի (Լոռու մարզ, ՀՀ): Ավարտել է՝ ԵՊԿ-ի ժողովրդական գործիքների բաժինը՝ քանոն մասնագիտացմամբ (1990 թ., պրոֆ. Խ. Ավետիսյանի դասարանը), 1993-ին՝ ասպիրանտուրան, «Գալիք» համալսարանի ժողովրդական ֆակուլտետը: Մենակատար քանոնահար, ժողովրդական ԵՊԿ դասախոս, ժողովրդական միության անդամ (2020): Որպես քանոնահարուհի աշխատել է՝ 1979–1986 թթ. Հայաստանի Թ. Ալթունյանի անվ. Երգի- պարի պետ. անսամբլում, 1986–1987 թթ. Հայաստանի Գուսանյան պետ. անսամբլում, 1991–1992 թթ. Հայաստանի Պարի պետական անսամբլում, 1993–2001 թթ. ՀՀ ռադիո հեռուստատեսության Ա. Մերանգույանի անվ. ժողովրդական գործիքների անսամբլում: 1994–1997 թթ. ղեկավարել է Երևանի Հատուկ գնդի ժողովրդական գործիքների անսամբլը և եղել է քանոնահարը: Դասավանդել է՝ 1979–1983 թթ. Արմավիրի (Հոկտեմբերյան) շրջանի Չերժինսկու անվ. սովխո-

գի երաժշտական դպրոցում, 1990–2009 թթ. Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիայում, 2009-ից մինչև այժմ Կ. Սարաջյանի անվ. երաժշտական դպրոցում՝ ժողովրդական գործիքների բաժնի վարիչ, վարում է քանոնի դասարանը և ղեկավարում ժողգործիքների անսամբլը: 2019-ից մինչև այժմ Ա. Բարաջանյանի երաժշտա-մանկավարժական քոլեջում՝ դասավանդում է մանկավարժական պրակտիկա: Հեղինակ է՝ քանոնի 4 ուսումնական ձեռնարկի՝ «Անմար գո հարներ» (2 հատ., Եր., 2005 թ. և 2010 թ.), «Փոխադրումներ քանոնի համար» (2010 թ.), «Խաչատուր Ներսիսյանի կոնցերտային պիեսները քանոնի համար» (2010 թ.), գիտական և հրապարակախոսական հոդվածներ ընդհանուր առմամբ «Նրան էլ են փորձում յուրացնել», //Երաժշտական Հայաստան, ամսագիր, 1-3 (44-45) 2013 թ., «Արմինե Պողոսյան. կոչումով մանկավարժ», //Երաժիշտ ամսաթերթ, N 4, 2013 թ., «...Իսկ բարեկամությունը շարունակվում է», //Հայաստան, 13-20.12.2012 թ., «Երջանկությունը թևեր է տալիս, հայրենասիրությունն արժանապատվու թյան զգացում», //Երաժիշտ, ամսաթերթ N 1 (122) 2016 թ.: Ունի հոդվածներ նաև «Հայ գինվոր», ՀՀ ՊՆ, «Մարտիկ» Արցախի Հանրապետության պաշտոնաթերթերում, Բեյրութի (Լիբանան) «Խօսնակ» ամսաթերթում, հրատարակություններ ունի նաև ԱՄՆ-ում պիլոտրահայ մամուլում //«Նոր օր», //«Մոլորակ» և այլ: 2000-ին «World music awards» միջազգային մրցանակաբաշխության (ԱՄՆ) մրցանակակիր է:

Об авторе: АНУШ МЕСРОПОВНА КИРАКОСЯН (род. 14.12.1957, г. Алаверди, Лорийский р-н, РА), солистка-канонистка, журналист, педа гог ЕГК, член Союза журналистов РА (2020). Автор четырех учебников для канона: “Анмар гоарнер”, ч. 1 (2005), часть 2 (2010); “Пе реложения для канона”, 3-я книга (2010); “Концертные пьесы для канона Хачатура Нерсисяна” (2010). Автор ряда статей, печатается в газетах “Еражишт”, “Ай зинвор”, “Мартик”, в журналах “Музыкальная Армения”; “Хоснак”, Бейрут (Ливан). Работала: с 1979 по 1983 в музыкальной школе Дзержинского совхоза Армавирского р-на; с 1980 по 1986 - в Гос.ансамбле песни и танца Армении им. Т. Алтуняна. Работала в Ансамбле народных инструментов им. А. Мерагуляна Гостелерадио Армении (1993-2001), канонистка и руководитель Ансамбля народных инструментов Ереванского особого полка (1994-1997). Преподавала: в Госконсерватории им. Комитаса (1990-2009); зав.отделением народных инструментов, педагог по классу канона в ДМШ им. К. Сараджяна (с 2009), вела педагогическую практику в Музпед. колледже им. А.Бабаджаняна (с 2019); с 1986 по 1987 - в Гос. гусанском ансамбле; с 1990 по 1991 - в Гос. ансамбле танца Армении; с 1993 по 2001- в Гос.ансамбле народных инструментов Радио и Телевидения РА им. А. Мерагуляна; с 1990 по 2009 - в Госконсерватории им. Комитаса.

About the author: ANUSH MESROP KIRAKOSYAN (was born on 14 December 1957 in Armenia, Alaverdi). A soloist kanon player, as well as a lecturer of music at YSC Anoush Kirakosyan is an author of four books including “Eternal diamonds 1” (2005), “Eternal diamonds 2” (2010), “Works for kanon” (2010) and “Khachatur Nersisyan’s concert plays for kanon” (2010). She also wrote a number of articles in “Avangard”, //“Musical Armenia” journal, “Yerazhisht” newspaper, //“Armenia” newspaper, 13-20 December 2012, “Happiness gives wings, Yerazhshtakan Hayastan journal and many more. в ньArmenian

soldiers”к Lebanese (Beirut) “Speaker” magazine. In different time peri-ods she worked in different places among which were: 1979-1983 The musical school of the city Hoktemberian, 1980-1986 Tatul Altunyan Armenian state song & dance ensemble, 1986-1987 Armenian State Ensemble Minstrel Folk Songs of Armenia, 1990-1991 Armenian State Dance Ensemble, In 1993-2001 has been working at Public Radio Aram Merangulyan Ensemble of Folk Instruments. In 1994-1997 she was qanun player and the Director of the Ensemble of Folk Instruments of the Yerevan Special Regimen. In 1990-2009 was a pedagogue at the YSC, and since 2009 is qanun teacher and the Head of the Department of Folk Instruments at K. Saradjian Music School. Since 2019 she is teaching Pedagogical Practice at the A. Babajanyan Music College. 1990-2009 Yerevan State Conservatory after Komitas.